

ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

«Русская Мысль»-ը իր գեղեցիկ-քերի համարում այնպատում է ձեռ-կերպել ուսու հասարակութեան ազատամիտ մասի ժամանակակից ցանկութիւնները:

«Ջանազան թերթերի, ևս առաւել, զանազան ժողովրդերի և լեզուների կարծիքները ի հարկէ, խիստ բազմազան են, անուրէր չեն թերթը: Բայց առ հասարակ այդ բոլորը կարելի է արտայայտել ընդհանուր ընտանրութիւն կրող մի քանի դանկութիւնների մէջ: Համաձայն այդ ցանկութիւնների՝ մեր հասարակական և պետական կեանքի կանոնաւոր ընթացքը և զարգացումը հնարաւոր է միմիայն այն դէպքում, երբ կը ստեղծուի պետական իշխանութեան և հասարակութեան մէջ սերտ կենդանի յարաբերութիւն և միութիւն: Ծրանց փոքրագործ յարաբերութիւնները պէտք է հաստատուած լինին այն ընդհանուր սկզբունքների ընդունելութեան և իրագործման վրայ, որոնք ապահովում են անձի և մասնաւոր ցնականի անբռնաբարելիութիւնը, խղճի, դասնութեան, մամուլի խօսքի, ժողովրդերի և ընկերակցութիւնների ազատութիւնը: Բոլոր այդ անհատական իրաւունքները հաւասարապէս պէտք է տարածուին ուսական կայսրութեան բոլոր քաղաքացիների վրայ: Եւ որպէս զի յիշեալ սկզբունքներն հիմնաւորապէս արմատներ ձգեն, անհրաժեշտ է կառավարութեան և հասարակութեան միութիւնը:

«Եւրաքանչիւր երկրի անտեսա-

կան և քաղաքական կեանքի արագ և յաջող զարգացման գլխաւոր պայմանը՝ ժողովրդի ինքնուրոյն գործունէութիւնն է: Եւ քանի որ Ռուսաստանի ազգաբնակչութեան մեծամասնութիւնը բաղկացած է գիւղացիներից, ուստի ամենից առաջ անհրաժեշտ է ստեղծել այնպիսի պայմաններ, որ նրանց ինքնագործունէութիւնը և էներգիան մղուին ստանալ: Այդ նպատակին համար համար հարկաւոր է գիւղացիների անձնական իրաւունքները, այսինքն նրանց քաղաքացիական և քաղաքական իրաւունքները հաւասարեցնել միւս դասակարգերի հետ: հարկաւոր է ազատել գիւղական ազգաբնակչութիւնը նրա վրայ ծանրացող վարչական խնամակալութիւնից, ապահովելով նրան անկախ դատարանով:

«Քաղաքային և գեմստօլի հաստատութիւնների մէջ է գլխաւորապէս կեդրոնացած լինում տեղական հասարակական կեանքը: Որպէսզի այդ հաստատութիւնները կարողանան յաջողութեամբ իրագործել իրանց պարտականութիւնները, պէտք չէ որ գեմստօլի ներկայացուցչութիւնը հիմնուած լինի դասակարգային սկզբունքների վրայ և անհրաժեշտ է զործի կանչել տեղական ազգաբնակչութեան բոլոր պատրաստ ոյժերը: Զեմստօլի հաստատութիւնները պէտք է ձօնեցնել ազգաբնակչութեանը, ստեղծելով տեղական փոքրիկ գեմստօլական միութիւններ, իսկ քաղաքային և գեմստօլի հիմնարկութիւնների իրաւաստութիւ-

նը պէտք է տարածել տեղական կարիքների և շահերի ամբողջութեան վրայ: Անհրաժեշտ է յիշեալ հաստատութիւններին տալ հարկաւոր ինքնուրոյնութիւն և կարողութիւն: Եւ վերջապէս տեղական ինքնավարութիւնը պէտք է հաւասարապէս տարածուած լինի ուսնական կայսրութեան բոլոր մասերի վրայ:

Ահա այն ցանկութիւնները, որոնց վերաբերմամբ այժմ համաձայն է ուս հասարակութեան նշանաւոր մասը: Դրանք բոլորն էլ ունին բացառապէս քաղաքական բնաւորութիւն և այդ պատճառով երբեմն հակաճառութեան առարկայ են դառնում այն անձանց կողմից, որոնք անհրաժեշտ են համարում առջի մղել տնտեսական հարցեր, գտնելով որ վերջինները խոշոր կարեւորութիւն ունին մեր ներքին կեանքի համար: Այսպիսի հակաճառութիւնը սակայն մեզ թուում է թիւրիմացութեան արդիւնք: Եւ յիշուի, այն ինչ աւելում է այժմ, և ինչ որ մենք կարճ կերպով առաջ բերինք վերևում, բոլորովին չի ներկայացնում պետական և հասարակական գործունէութեան օրէնքների մի լիակատար ժողովածու: Սա ծրագիր է միմիայն ներկայ վայրկեանի, ցուցումն է՝ թէ ի՞նչ պէտք է սկսել: Եւ անշուշտ հարկաւոր է, նախ առաջ բերել քաղաքական այնպիսի պայմաններ մեր հասարակական կեանքում, որոնք կարելի դարձնեն տնտեսական և կուլտուրական խնդիրների մշակումը, ինչպէս և նրանց իրադրոժումը: Քաղաքական ընթրոմները կուսակիցների մէջ հազիւ թէ ճարուին շատերը, որոնք կարծին թէ լիշեալ ընթրոմների մէջ պարունակուում է բոլորը՝ ինչ հարկաւոր է ուս ժողովրդին: Նրանց անհզին մեծամասնութիւնը անշուշտ հասկանում է, որ այդ ընթրոմները կազմում են միայն առաջին քայլը, բայց հենց այդ քայլը անհրաժեշտ է,

որպէսզի հնարաւոր դառնան յաջորդները: Միւս կողմից քաղաքաւոր շնայն մարդիկ, որոնց կարծեքով կարելի է տնտեսական լուրջ ընթրոմներ իրագործել բնութեամբ տեղական միջոցներով: Խնչպէս կարելի է լուրջ կերպով զբաղուել տնտեսական խնդիրներով այնտեղ, ուր օրինակ ընկերավարական բառը հոմանիշ է խառնակիչի կամ աւազակի, և յամենայն դէպս ընկերավարականը համարուում է այնպիսի մարդ, որին հարկաւոր է առանց հարց ու փորձի բռնել և բանտ նետել:

Ահա թէ ի՞նչու, մեր կարծեքով ներկայումս միանգամայն հնարաւոր է, որ սոցիալական և տնտեսական խնդիրների մասին տարբեր հայեցակէտներին տէր մարդիկ՝ առանց հրաժարուելու իրանց իդէալներից համաձայնութեան գտն: Եւ այդ համաձայնութիւնը կը լինի քաղաքական այնպիսի պայմանների պահանջի վրայ, որոնք հաւասարապէս անհրաժեշտ են ամեն տեսակ աւրտեսական վարդապետութիւնների արտայայտութեան և տարածման համարը:

«Անտեքս»-ի դէկտ. համարում գտնում ենք հետեւեալ տեղեկութիւնները՝ Ա. Խասոխա Աղանուրի՝ ծանօթ հայ բանաստեղծու մասին:

«Վեթքորիա Աղանուր ծնած է Փատուա քաղաքին մէջ, հայ հօրմէ մը և խալաքի մօրմէ մը. իր հայրը անդամ հնդկահայ Աղանուր ծանօթ ընտանիքին, բարեպաշտ, խորագգաց, ազնուասիրտ, ճշին հայու սիրուն ու հօգ տիպար մը եղած ըլլալ կը թուի, ինչպէս կ'երևայ այն յուզեալ բերթուածէն, զոր բանաստեղծուհին նուիրած է անոր յիշատակին: Վեթքորիայի ուսուցիչներն եղած են, ինչպէս ինքն իսկ հաճած է միզի տեղեկացնել՝ ծաղոմօ, Ծանեկա և Էնրիքօ Նենչիոնի. իր գրական հմտութիւնը շատ ընդարձակ է. իտալական գրականու-

թենէն զատ ծանօթ է երոպական դրականութեանց բոլոր մեծ դէմքերուն. ոչ մէկ բանաստեղծի չէ հետեւած սակայն, օժտուած ըլլալով ինքնատիպ խոստումը մը: Մասնաւոր պաշտում մը ունեցած է միայն Լէօփարդին համար,— և արդէն անհնար է որեւէ դրական նուրբ խոստումը համար Լէօփարդին կարգալէ լիտոյ անոր նկատմամբ պաշտում չունենալ: Բայց պաշտելով հանդերձ Լէօփարդին, անոր ալ չէ հետեւած. հետեւած է միայն իր անհատական հոգիին:

Վիթթորիա Ադանուր ամուսնացած է վերջերս ազնուատոհմ խալացիի մը, կոմս Փոմփրիլիի՝ հետ, որ երեսփոխանական ժողովին ան-

գամ է և հաստատուած է Փերուճեա:

Եր բանաստեղծութեանց հատորը, La Leggenda Eterna, հրատարակուած է 1900-ին, Միլանի մէջ: Առաջին տպագրութիւնն սպառուած է իսկոյն և այժմ երրորդ տպագրութիւնը մամլոյ տակ է: Այդ հատորին երեսմը իտալական թերթերուն մէջ ողջունուած է հիացական յօդուածներով, որոնք Ադանուրը կը դասեն Իտալիայի արդի լուսաւորյն բանաստեղծներուն կարգը:

«Յաւայի է որ Ադանուր, հայ արին կրելով հանդերձ իր երակներուն մէջ և ունենալով բանաստեղծական հզօր ու լայն շունչ մը, դեռ իր քնարի վրայ գէթ հեղ մը Հայ Տառապանքը երգած չըլլայ»:

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՈՂՄԻՑ

Զգիտենք ի՞նչ հիման վրայ մոռացուած է, որ Պարսկաստանը արտասահման է, ուրեմն «Մուրճի» տար. բաժանորդագիրն 12 ըուրլի է և ոչ 10 ըուրլի. պոստի ծախքը արտասահմանի համար աւելի է, քան Ռուսաստանի: Իբրեւ բացառութիւն Պարսկաստանում 10 ըուրլի բաժանորդագիրն «Մուրճի» համար ընդունուած է միայն զիւղական ուսուցիչներին և զիւղական քահանաներին, իսկ զրադարան-ընթերցարանները պէտք է ուղարկեն արտասահմանի համար որոշուած բաժանորդագիրն լրիւ:

Խմբագրութիւնս ստացել է բաժանորդագիրն—նուէրներ 1905 թ. համար հետեւեալ անձերից. Թիֆլիս.— Գ. Մ. Առաքելեանից 1 բաժ., Բագու.— Բժ. Մամիկոնեանից 1 բաժ., Բժ. Գ. Սարգսեանից 1 բաժ., ինժ.